

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 23-րդ մասը լրացնել նոր 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) Սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով ֆիզիկական անձանց կողմից առանց հավաստագրի ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով առանց հավաստագրի անձնական օգտագործման դեղեր ներմուծող ֆիզիկական անձինք:».

2. 7-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1) օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի կամ փոխադրողի կողմից և (կամ) միջազգային փոստային փոխադրումներով մեկ ամսվա ընթացքում ֆիզիկական անձանց անուկնով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: